Արձանագրություն N 5

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-06-8» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» սեպտեմբերի 2016թ. Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Կարեն Համբարձումյանը, գնահատող անդամներ՝ Խորեն Պետրոսյանը, Կարեն Մելքոնյանը, Արթուր Թամազյանը, Անահիտ Ավագյանը և քարտուղար Արամ Համբարյանը:

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված:

1. **Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-06-8» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ բանակցություններ վարելու մասին.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2-րդ չափաբաժնի մասով «ԼԱՆԱՐ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի և «ՕՖՏԵԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը մերժվել են, իսկ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում էր այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես նաև, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի և ինքնարժեքի նկատմամբ հաշվարկվող ԱԱՀ-ի հանրագումարը ևս գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ նշված չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ –ի հետ բանակցություններ չեն վարվել: Գնի նվազեցման շուրջ բանակցություններ են վարվել միայն «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ:

«ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-06-8» ծածկագրով ընթացակարգի շրջանակում կազմակերպված բանակցություններին ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցը՝ «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Հարությունյանը, բանակցություններին ներկայացել էր սահմանված ժամին, այդ իսկ պատճառով գնահատող հանձնաժողովը որոշեց «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ 2-րդ չափաբաժնի մասով գնի նվազեցման շուրջ կազմակերպել բանակցություններ:

Նկատի ունենալով, որ իրականացված գնահատման արդյունքում «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող և նիստին մասնակցում էր հայտ ներկայացրած մասնակիցը, հանձնաժողովը վերջինիս հետ կազմակերպեց գների նվազեցման բանակցություններ՝ բանակցությունների համար սահմանելով 15/տասնհինգ/ րոպե ժամանակ:

Կազմակերպված բանակցությունների արդյունքում՝ մինչև բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտը՝ հայտ ներկայացրած մասնակիցը նվազեցրեց գնային առաջարկը՝ 2-րդ չափաբաժնի համար առաջարկելով 144000 /մեկ հարյուր քառասունչորս հազար/ ՀՀ դրամ մեկ թվով արտահայտված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովը որոշեց հրապարակել տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

<u>1-ին չափաբաժնի մասով</u> 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:
3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը
1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,
2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև՝ Կարգի 35-րդ կետի 1-րդ ենթակետի զ) պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:
Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:
5. Ղեկավարվելով Կարգի 48-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան հարցումը ստանալուն հաջորդող օրը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Կ. Համբարձումյան

Հանձնաժողովի անդամներ՝

Խ. Պետրոսյան

(ստորագրություն)

Կ. Մելքոնյան

(ստորագրություն)

Ա. Թամրազյան

(ստորագրություն)

Ա. Ավագյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող

Ա. Համբարյան

(ստորագրություն)